

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՉԳԱՅԻՆ ՉԵՌԱԳԻՐԻՔ Ի ՊԸՂՏԱՏ

Պատաստ, 10/22 Մեկտ. 1889:

Պաղտատի ազգային ձեռագիրներն Հե-տեւեալներն են, որչափ կարողացայ ցարդ իմա-նալ, որոնցմէ Ա.ը կը գտնուի իմ քովս. Բ.ը բարեկամի մը քով եւ մնացեալներն տեղոյս Ասքանաղեան ընկերութեան թանգարանին մէջ:

Ա. Մեկտեմբերն երէք երէքոյն: Ասիկայ մեծա-դիր եւ 378 երեսէ բաղկացեալ է, դժբախ-տաբար չէ նշանակուած թէ որո՞ւ Հեղինակու-թիւնն է եւ որ թուին յորինեալ: Երկայն յա-ռաջարան մ'ունի, որուն մէջ այսպէս կը գրէ:

«... Չորս եւ իմ ծանուցեալ ի մանկութենէ իմմէ ի զօսնուլ ի սուրբ զիրս՝ սիրահարեալ բանից անհամաստ մեծ իմաստնոյն սորոմնի, մանաւանդ սոյն երգ երգոց անուանեալ թղթոյն, զորս երբեմն ի ձեռս առեալ խոչ եւ խուժե-լանէր ընդ առաջ, չկարելով բնաւ հասկանալ, եւ ոչ ամենեւին կարել իմանալ, վասն զի ոչ ունեւրով զոք առաջնորդ, եւ գոնէ մեկնիչ իմն կարել գտանել, սոյնպէս տագնապելով դեզե-րեալ մնայի ի ներս մեծի տարակուսութեան, մինչ ցգտանել զմեկնութիւն մեծին վարդաւայ վար-դապետին մերոյ, եւ ապա զմեկնութիւն հիպո-դիտեայ, եւ զսակաւ խօսս որոգինէսի: Յորոց փոքր ինչ հաւաքեալ ծաղկաբաղ ոմանց տեղեաց լուծմունք առնել կարճելով, վասն իմ՝ եւ ոչ վասն այլոյ ուրուք:

Գործքը կը վերջացընէ այսպէս.

«Եւ արդ՝ մինչ ցայս վայր եւ մեք ժողովեալ հաւաքեցաք զմեկնութիւն սորին որքան եւ մերս կարն եբեր, բայց զսրբագրութիւն սորին յան-ձնեմ ամենակալ թագաւորին երկնի եւ երկրի, քանզի ընդ ծերութեանս եւ տկարութիւնս խառ-նեալ չտայ թոյլ բանալ յաւացս, այլ եթէ տէր կամեսցի եւ տայցէ առողջութիւն, յայն-ժամ վերստին դառնալ ի սկզբանէ մինչ ցաւարտ նորապէս սրբագրել, ապա եթէ կոչնատերն ստի-պեցէ, յայնժամ թողում զայն հարազատ եղ-բարց իմոց, ուղղափառ վարդապետաց մերոյս ե-կեղեցոյ հաւատարիմ եղելոցն առ ի սրբագրել, բայց եւ այսպէս զի ոչ ինչ բարձցէ ի միջոյն, կամ աւելորդ բան ինչ խառնեցէ ի նա, այլ բոտ արհեստին ուղղեցէ, բանից եւ բառից յետ եւ առաջ գրութիւնն մեկնեցէ, եւ նախադրու-թեանց զաւելին բարձցէ, եւ զպակասն լցուցէ, բոտ պահանջման տեղոյն, այսքան միայն խրն-դրեմ եւ եթէ քան զայս աւելի առնել ժպր-հեցի, յայնժամ առաջի ասանոր ատենի անա-չառ դատարորին զձեռս իմ՝ արկանեմ զձիս նո-րին եւ ինդրեմ զերաւունսս:»

Բ. Ա-եդարան, մեծագիր, զարգարեալ մա-նրանկարներով: Յիշատակարանին մէջ այսպէս կ'ըսէ գրողն:

«Ես խիզանցի մետրոպ վարդապետս կոչեալ որ էի տարագնաց եկաւորութեամբ բնակեալ ի շոշ յորջորջեալ ագամբիւսակերտ քաղաքիս որ բոտ այժմուս ասի ասպհան, գրեցի տխրեմ եւ մեղ-

սաներկ ձեռամբս մետրոպ խիզանցի դպիրս աշա-կերտին իմոյ վարհամ գծագրել ետու եւ բոտ կարի ոսկենկար երանդօք վայելադրուցեալ շնոր-հեցի եկեղեցեացց հայաստանաց ի վայելումն եւ ի խրախմանութեանց մանկանց իւրոց ի ժամա-նակս տերութեանս պարսից մանկանն շահապաղ կոչեցեալ յաւուրն որում դիմի հարկաներ թա-գաւորին արեւելեան հնդկաց ի վերայ բերդին Ղանդահար կոչի ասացեալ ի թուարեթութիւնս Ռ.Ղ.Ը. ի հայրապետութեանս հայոց տեսուն Փի-լիպոսի խարազագրեաց ճգնաւորի: Արդ սկսեալ եղեւ տպագրերն ըսպհան ընդ հովանեաւ սուրբ աստուածածնին եւ յաւարտն ի սուրբ մեհաս-տան սուրբ կարապետի որ է նախագահ եւ երեւե-լի յոյժ ի գաւառս Երրնչակայ յառաջնորդու-թեամբ Տէր Եսայեա քրտնաջան վարժապետի որ յոյժ երկամբ աշխատի ի շինումն սրբոյ եկե-ղեցւոս մեծի կոփածոյ քարամբ գեղեցկաշար ի հիացումն տեսողաց յորինեալ ձեռամբ յորեա-հնար դաւիթ կոչեցեալ ուստայի բոտ որում ա-զեխարշ սրտիւ պաղատիմ յիշել զինքն եւ զար-բանակեալ միարանն իւր զմարտիրոս եպիսկո-պոսն զտէր յովհաննէս վարդապետն, զտէր յով-հաննէս եւ զտէր աւիստակէսն, որք եւ սիրով աշակերտք եղեն արուեստի... յովհաննէս վար-դապետն եւ զղազար եւ արիստակէս կիսասար-կաւագան եւ զդաւիթ անտեսն որ սիրական ինա-մածով սփոփէր զվարանաղեալքս ի նժդհու-թեանս եւ զամենեանս որ զնովաւ կերան: Ընդ տոսին եւ... եւ զառածեալս զմետրոպ դպիրս խիզանցի եւ փեսացեալս իմ եւ զսիրանունդ զա-շակերտս իմ եւ զաշխատողս ընդ իս զգրիգոր արհեստաւերս, նաեւ զձնողսն իմ զտէր մար-տիրոսն եւ զնոնգքանն եւ զեղբայրս իմ զտէր թաղէոս եւ զզարանումն եւ զամենայն արեան մերձաւորսն յիշեցէ եւ աստուած ողորմի ասա-ցէք ամէն. եւս առաւել դարձեալ յիշեցէ զիս եւ զանթաժան մետրոպ դպիր խիզանցիս եւ զհո-գեւոր վարդապետս իմ նախ զտէր սարգիսն որ մականունն մաղման կոչի եւ զիւս վարդապետաց վարպետն զտէր մարտիրոս խիզանցի եւ զամենայն երախտաւորս յիշեցէք եւ Աստուած ողորմի ա-սացէք, ամէն:»

Գ. Ա-եդարան զարգարեալ մանրանկարնե-րով, որոյ յիշատակարանին մէջ երկայն գոհա-բանութենէ մ'ետեւ կ'ըսուի թէ Խաւաջ Ա.էլի-ջան գրել տուած է նոյն Ստեփանոս քահանային ՇՅՂ քաղաքին մէջ ի թուականին Հայոց ՌԾԷ:

Դ. Մաշտոց: Յիշատակարանն այս է.

«Փառք ամենասուրբ երրորդութեանն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ անգրաւ յաւի-տենից ամէն: Արդ եղեւ զրաւ այսմ գրոցս որ կոչի Մաշտոց, կատարող օրինաց քրիստոնէից, ի լաւ եւ յրնտիր օրինակէ ձեռամբ մեղապարտ գրչի գրիգորի, ի քաղաքս Բաղէշ, ընդ հովա-նեաւ սուրբ խորան եկեղեցւոյ ի թվականիս ՌՃՀԸ, արդ որք հանդիպիք սմա եւ օրէնք կա-տարէք, լի բերանով Աստուած ողորմի ասացէք ինձ գծողիս եւ ծնողացն իմոց եւ ստացողի գրոցս աստուածաւերս եւ բարեմիս:»

Ե. Ռեկեմբերն: Վերջէն քիչ մը պակաս է սկիզբն հետեւեալ է. «Հարցմունք մասուգչահ իշխանի բարեպաշտի եւ պատասխանիք գրիգորի նախ՝ յաղագս սրբոյ երրորդութեանն եւ ապա յաղագս բանին Մարգեղութեան, ի սուրբ գրոց

1 Կիտանիշ տեղերն անընթեւունն են: